ԵՐԿԱՐ ԳԻՇԵՐՆԵՐ

Տանջվում եմ անքուն գիշերն անկողնում,
Տանջվում հուսահատ, վաստակած, տրկար,
Եվ մրտքերն հոգիս հանգիստ չեն թողնում,
Եվ գիշերը մո՛ւթ, գիշերը երկար։

Ա՜խ, մի ժամանակ, և դեռ նոր էր այն,
Մայրական գիրկ էր աշխարքն ինձ համար,
Հըրճվանքը սըրտիս չէր թըվում ունայն,
Ոչ գիշերն այսպես տաղտկալի, երկար։

Էհ, անցա՛վ, գնա՛ց. և՛ ցընորք, և՛ սեր,
Եվ ույժ, և՛ եռանդ – կորավ՝ ինչ որ կար,
Եկան սև օրեր ու ծանըր հոգսեր
Ու դարձրին այսպես գիշերը երկար։

Տանջվում եմ անքուն այժըմ անկողնում,
Եվ հուսակըտուր, հոգնած, ուժասպառ
Նայում եմ, նայո՛ւմ, դեռ չի լուսանում.
Ա՜խ, այս գիշերներն ինչքա՛ն են երկար։